

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

12.03.2015թ. նիստին

### *Մասնակցում էին՝*

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

### *Հրավիրված էին՝*

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն.Մուշեղյանը:

### *Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.*

1. «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/*

#### **Որոշեցին՝**

Հաստատել «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը»՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի եվ վերլուծության նախարարության 1998 թվականի նոյեմբերի 18-ի N 150, 1999 թվականի հունիսի 30-ի N 128 և 2000 թվականի փետրվարի 25-ի N 18 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Վ.Սարոյան/*

#### **Որոշեցին՝**

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության 1998 թվականի նոյեմբերի 18-ի «Միջազգային համագործակցության շրջանակում նախարարության կողմից ծրագրերի (վարկային, շնորհային) վարման կարգը հաստատելու մասին» N 150, 1999 թվականի հունիսի 30-ի «Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվող իրավաբանական անձանց

գրանցման գործընթացը կանոնակարգման անհրաժեշտության մասին» N 128 և 2000 թվականի փետրվարի 25-ի «Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի գրանցման գործընթացը կանոնակարգման անհրաժեշտության մասին» N 18 հրամանները:

*/Նորմատիվ/*

3. Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2015 թվականի մարտի 3-ից 6-ը ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 46-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/*

### **30.03.2015թ. նիստին**

#### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

#### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը:

#### **Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների (2014 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակահատված) հաշվարկման մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/*

#### **Որոշեցին՝**

Հաստատել 2015 թվականի սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար նոր սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար որպես բազիսային ժամանակահատված սահմանել 2014 թվականի դեկտեմբեր ամիսը:

*/Անհատական/*

**11.04.2015թ. նիստին**

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը.

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույունջյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մարտիրոսյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

***Որոշեցին՝***

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին տողի «22123.8» թիվը փոխարինել «22102.2» թվով, 2-րդ տողի «412171.3» թիվը փոխարինել «423116.0» թվով, 4-րդ տողի «85143.6» թիվը փոխարինել «84441.7» թվով, ընդամենը տողի «628471.1» թիվը փոխարինել «638692.3» թվով:

*/Անհասարական/*

2. «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին ձև 65-երկաթ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու դրա լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ ՎՊԽ 2014 թվականի մայիսի 19-ի թիվ 20-ն որոշումը» ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» ձև 65-երկաթ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2014թ. մայիսի 19-ի ««Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» ձև 65-երկաթ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 27-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 20-ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

*/Նորմատիվ/*

3. «Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների վերաբերյալ ամփոփ վիճակագրական հաշվետվության ձևերը և դրանցում օգտագործվող հասկացությունների մեկնաբանություններին հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Կ.Կույունջյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների վերաբերյալ» Ձև թիվ 1-ԿԱՅՈՒԹՅՈՒՆ (կիսամյակային) և Ձև թիվ 2-ԿԱՅՈՒԹՅՈՒՆ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի երկրորդ կիսամյակից:

*/Անհատական/*

4. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2015 թվականի մարտի 9-ից 12-ը «Վիճակագրության նոր մեթոդներ և տեխնոլոգիաներ» խորագրով գիտաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ.Դավթյան, Ա.Մարտիրոսյան/*

5. Հաղորդում՝ Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ քաղաքում 2015 թվականի մարտի 10-ից 11-ը Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության /ՏՀԶԿ/, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/՝ համագործակցությամբ Շրջակա միջավայրի պահպանության Եվրոպական գործակալության և ՄԱԿ-ի Շրջակա Միջավայրի Ծրագրի հետ համատեղ կազմակերպած «Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգին» և «Կանաչ աճին» նվիրված սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու.Պողոսյան /*

6. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2015 թվականի մարտի 31-ից ապրիլի 1-ը «Բիզնես վիճակագրության կատարելագործումը և ՓՄՁ քաղաքականության մշտադիտարկումն Արևելյան Գործընկեր և ԵՄ անդամակցության հավակնորդ երկրներում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ.Ասանյան, Ա.Սաֆյան/*

7. Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2015 թվականի մարտի 5-ից 6-ն Արևելյան գործընկերության շրջանակներում ձևավորված միգրացիայի և ապաստանի հարցերով գործող հարթակի կողմից կազմակերպվող «Միգրացիոն տվյալների կառավարում և միգրացիոն միտումներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ.Գևորգյան/*